

բուհի հայրապետն Եփրեմ, և կենդանի տանիլ ինուէր Շահզատային. բայց արիութիւն Զորագետցւոց հալածական արար զՊարսիկ զօրս:

39.) Յետ նուաճելոյ Կայսերութեան Ռուսաց ղԵրեան և զրոլոր նահանգս Խրարատեան, և ազատութեան Մայր Աթոռոյն Օ. Էջմիածնի, ծերունադարդ Հայրապետն Եփրեմ դարձաւ ի Հաղքատայ ի 1828 ամի յաղատեալն ի Սուրբ Էջմիածին, ի 1830 ամի, ի պակասիլ լուսոյ աչաց Հրաժարական ետ, ընտրել զոք ի տեղի իւր և ի 1831 լնտրեցաւ Յովհաննէս Ը. Կարքեցի ի կաթուղիկոսութիւն Հայոց. յորոյ աւուրս հաստատեցաւ կանոնադրութիւն յաղագս կառավարութեան եկեղեցեաց Հայոց ի Ռուսաստան, ի կայսերէն Ռուսաց ի 11 Մարտի 1336 ամի, որով և բացան Սրբազն Սինօդն Էջմիածնի, վեց պիճակային Կանսիստորեայք, Հոգեւոր կառավարութիւնք: Սա ի կենդանութեան իւրում վճարեաց զծանր պարտս Աթոռոյն. և զտասն հաղար մանէթ եղ յարքունի բանկս յանուն Սուրբ Աթոռոյն Լուսաւորչի:

Թոստոմ — ԲԵԿ Խրզնկեանց.

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ ԵՒ ՀՆՏԱՆԻՔԸ

ՄԱՏԱԴ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷԶ, ԵՒ ՆՈՑԱ՛ ՄԻՄԵԱՆՑ
ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

(Ե-բ-ն-ի-ն-ի-ն և լուրջ)

Այսպէս ուրեմն ուսումնարանը կարող է առաւել մեծ չափով աշակերտի բարբի և կամբի վերայ աղդել և նորան ապագայ կեանքի համար նախապատրաստել քան թէ ընտանիքը. ոյ, ուստի ու ու իւլուն ու անհրաժեշտ ու ու իւն է ընտանիքի բնաւորութեան իւլունիւն ու ու իւրաքանչեան արջ:

Այդ գաստիարակութեան երկու հաստատութիւնների խնդիրներից մինչ է որ նրանցից իւրաքանչիւրը ինչ սահմանների մէջ որ միւսը ինքնուրոյն գործումէ պիտի յարգէ, միւսի իրաւունքներն կամովին պիտի ճանաչէ և նորան պէտք եղած ու շաղրութիւն ընծայել և երբէք չըպիտի մանուկների առ միւսի գործ գրած միջոցներ պախարակէ. Աւ որովհետեւ դաստիարակչի

Հեղինակութիւնն նորա աշխատանքի հետեանքի համար մի անհրաժեշտ նախապայման է. ռւստի և ծնողներն նորա գործունեութեանը մեծ վնաս հայրած կը լինին, եթէ ռւսուցչին իրանց մանուկների ներկայութեամբ պահարակեն, կամ նորա երր և իցէ թոյլ կողմերն յիշատակեն, առանց յարգանքի նորա մասին խօսեն, կամ թէ նրան ծաղըեն. Ըստ սխալ կլինէր, թթէ մանուկներին ընտանեկան պարտաւորութիւններն ճշտիւ կատարելու մէջ արգելք լինէին և նրանց ուղիղ յարաբերութիւնն ընտանեկան խնդիրներում չը կնախատեն. իսկ միւս կողմից շատ ցաւալի կը լինէր. Եթէ որ ընտանիքը մանուկների արած ամեն մի սխալը ներէր և նրանց գանգատներին իրանց ռւսուցիչների մասին առանց քննելու հաւատ ընծայէր. Եթէ մանուկները գիտեն որ ռւսումնարանում ստանալիք պատժի միջոցին իրանց ծնողներն միշտ նրանց պաշտպան պիտի հանդիսանան, այն ժամանակ ռւսուցին շատ անդամ անիրաւացի կերպով կը նդիմանան և նորա բարերար ազդեցութիւնն նրանց վերայ իւր նշանակութիւնը կը կորցնէ. Նոյնպէս ևս սխալ կը լինէր, եթէ ռւսուցիչները ծնողների զարգացման աստիճանը ծագումն և հեղինակութիւնն ապակաս գնահատէին իրանց աշակերտների առջե, Եթէ գոքա մինչեւ անգամ ժողովրդի ամենաստարին դասակարգին պատկանէին. Ըստ անիրաւացի կը լինի, եթէ ռւսումնարանը ծնողներին առանց մի որևէ պատճառի արգելք լինի. Երբ նորա մի պատահած պատժի դեպքի մէջ խառնվումն և դորա իսկական պատճառն իմանալ են ուզում, այդ միջոցին հարկաւոր է նորանց հանգստացնել և հասկացնել թէ նա նորա զաւակների համար լաւն է կամենում և միմիայն այն ժամանակ պատժի է գիմում, երբ այդ անպայման հարկաւոր է. իսկ յետոյ պարզել ծնողներին պատժի պատճառներն և շափլ. բայց եթէ ռւսուցիչը պատժելու միջոցին չափից անցնումէ. շատ լաւ կլինէր որ նորան այդ մասին յիշեցնեն, զի ուդ շատ գեղքերում բարերար ազդեցութիւն կունենայ:

‘Օսողներին հեռացնելն և նրանց պահանջի վերայ ուշք չըդարձնելն ա-
նիրաւացի է նաև այն կողմից, որ նորա իրանց զաւակների վերայ ամենա-
մեծ իրաւունք ունին քանթեւ ուսուցիչը. և միւս կողմից այդ շատ անմիտ
բան կլինէր, որովհետեւ ուսուցիչը դրանով վտանգի է ենթարկվում և ըն-
տանիքից ի ներքուստ բոլորովին բաժանվումէ. իսկ յետոյ նորա դաստիա-
րակչական գործունեութիւնն ինչքան պակասաւոր կարող է լինիլ, այդ մա-
սին արդեն վերը յիշեցինք. Ո---ու ոյդ Երի--- Հըն-ի-ն հ-ո-ո-ո-ո-ո-ո-ո-ո-
ի-ո-ո-ո-ո-ո-ո-ո- ո-ո-ո-ո- ո-ո-ո-ո- հ-ը-ը-ը-ը- բ-ը-ը-ը-ն-է-լ. մ-
շ-շ-ի-ն-է-լ մ-շ յ-ը-ք-ա-ն-, ո-է-լ և հ-ը-շ-ն-դ-ն-ի-ն մ-ը-ց-ն-է-լ և դ-ո-ո-է-բ-ի-ն ը-ն-է-
լ հ-ա-ն-ո-ո- ո-ո- հ-ա-ն-է-լ հ-ա-ն-ո- մ-ի-ն- մ-ի-ն- ն-ի-ն- և ո-ո-ո-ո-

Առումնարան և ընտանիք պէտքէ միմեանց հասկացնեն իրանց փոխադարձ գաստիարակչական ազգեցութեան հետեանքների մասին մանուկների մտաւոր զարգացման վերաբերմամբ և թէ իրանց գործ դրած միջոցներն ևս պիտի միմեանց հաղորդեն։ Նոքա պարզ պիտի իմանան, թէ արգեօք իրանց սահմանական և հողեկան առողջութիւնը դէպի լաւն է գնացել, թէ նիկների մարմնական և հողեկան առողջութիւնը դէպի լաւն է գնացել,

ոչ, նորա հետևեալ հարցերին պիտի պատասխանեն, թէ արդեօք մտքի, հոգու և կեանքի կաղմակերպութեան վերաբերմամբ էլ ի՞նչ է պակասում. մինչև ցայժմ՝ գործ զրած միջոցներն պէտք պահպանել նոյնութեամբ, թէ փոփոխութիւն է հարկաւոր մոցնել. նրանց վարմութը շատ խիստ էր թէ շատ մեղմ. ի՞նչ ազդեցութիւն են արած խաղակից ընկերներն ու շրջակացը. հարկաւո՞ր է արդեօք խիստ հսկողութիւն, թէ պէտք սանիկին աւելի աղատութիւն տալ ելն. ահա այսպիսի և սրանց նման շատ հարցեր կան, որոնք ծնողների և ուսուցիչների մէջ պիտի պարզուեն.

Այս շատ կարեոր է ուսուցի համար, քանի որ նա բաղմաթիւ աշակերտների հետ է գործ ունենում և նրան գրեթէ անհնարին է իւրաքանչիւրի հոգու մէջ ծագած մտքերն ու դատողութիւններ ճշտիւ ճանաչել, մինչդեռ ծնողներին այդ աւելի հեշտ է յաջողվում. սակայն նա պարտաւոր է այդ իմանալ, եթէ որ ուղիղ ճանապարհով և վստահութեամբ նրանց վերայ ներգործ' է ուզում:

Զգուշութեան համար հարկաւոր է խոյս տալ կեղծ և աննպատակայարմար կրթական միջոցներ գործ գնելուց, ինչպէս օրինակ, ցաւի և ամօթիերկիւղը, շահելու և ճաշակելու յոյսը սիրումն չափաղանց զրգուել. Դոքա թէև առ ժամանակ ազդում են, բայց բնաւորութեան մի սխալ ուղղութիւն են տալիս, որովհետեւ նորա ճաշակասիրութիւնը զարգացնելով, զարգացնումն նաև նորա զգայականութիւնն. իսկ սաստիկ պատուասիրութիւնն յառաջացնելով, յառաջացնումէ միենոյն ժամանակ եսասիրութիւն, որոնք բարշյականութեան ամենավտանգաւոր թշնամիներ են. Ընդհակառակն այդ բաների դէմ պէտք է ամեն մի քայլափոխում մաքառել և նրանց փոխարէն սէր և բարեացակամութիւն, Աստուծոյ երկիւղը և վսեմ գաղափարը նորանց սրտերում պիտի սերմանել. Մանուկը այն բարին, որին իրանմերձեցնումն պիտի հասկանայ և սովորի ոչ թէ նորա համար որ նորան շահ է բերում և կամ զգայական զուարձութիւն, այլ որովհետեւ դա ինքնը ըստ ինքեան բարի է, և մարդիկների բարօրութեան նպաստում, որովհետեւ դա արդար է և իրաւացի, որովհետեւ մարդուս պարտը այդ է պահանջում և ամեն բանից առաջ—որովհետեւ Աստուծոծ այդ է կամենում. Հնազանդութիւն, պարտազգացում, համեստութիւն, երախտագիտութիւն, անձնուեր սէր պէտքէ ծնողներն և ուսուցիչներն մանուկների սրտում անկեն. մանուկների ամեն մտածմունքն ու զգացմունքը, կամքն ու արարքը պէտք է կրօնական հոգւով ներշնչուած լինին. Մանուկը պարտաւոր է վաղ ժամանակից ուսանել Աստուծուն ծառայել և իւր բոլոր գործերի մէջ կրօնական ձգտումներով առաջնորդուել. Աստուծոծ ամեն բան տեսնումէ ինչ որ դումտածում և անում ես, նա այդ մասին քեզանից հաշիւ կըպահանջէ. Եւ ինչպէս պէտքէ ես այնպիսի մի մեծ շարիք գործեմ և իմ տիրոջ Աստուծու դէմ մեղանչեմ. Ահա, այդ պիտի լինին շարժառիթներ մանուկների բոլոր անելիքի և չանելիքի համար, և ոչ թէ արտաքին օգուտ և շահ. Ծնողներն ու ուսուցիչներն դաստիարակչական գործի մէջ միշտ այն գա-

զափարով պիտի առաջնորդուին, որ ոչ թէ ժամանակաւոր բարիքներ և ամեն տեսակ զգայական զուարձութիւններ, այլ մի համեստ և երկիւղած բարբ կարող է հոգու համար երջանկութիւն պատրաստել. նոքա կարող են թէե ուշք դարձնել. որ ծանօթութիւններ և գործնական իրերում պատրաստականութիւններ արժէք ունին, սակայն նրանց գլխաւոր սկզբունքը պիտի լինի. «սկիզբն իմաստութեան երկիւղ Տեսոն»: Նրանց լոլոր դատիարակչական աշխատանքները պէտք է այնպիսի գիտութեամբ առաջնորդուեն, թէ մարդասիրութեան, մաքուր մարդկութեան և բարոյականութեան աղնիւ սերունդ միայն այն ժամանակ կարող է կեանքի հոսանքների և փոթորիկների դէմ մարտառել. Երբ նա Աստուծու երկիւղածութիւն իւր համար արմատ է շինել. Կրօնականութիւնը, բարոյականութիւնը և մարդասիրութիւնը բարձրացնումն մարդկային բնութիւնը իւր ամենաբարձր արժանաւորութեան. և այս միմիայն այն ժամանակ տեղի կարող է ունենալ Երբ որ երեքն ևս ի ներքուստ միմեանց հետ կապուած հաւասարապես աճում և զարգանաւմ են.

Այդպիսի ոգով յառաջ տարուած զաստիարակութիւնը ևս առաել ազ-
գեցիկ և արդիւնաւոր կրլինի, որոն որ Ճնշողներն և առաջնուներն օվունաց հետ
մերս ի-ու-վ ի-ու-մ-մ ի-ու-ի-ր և մե ի-ր-ու դ-մ-մ-ի-ու-ի-ն գ-ր-ծ-ն-ի-ու-ի-ր
հետանիներն և մե դուրս համար գործողութելի+ միջոցների մասին օվունաց ի-լ-ու-
ի-ու-ն-ե-ն և ի-լ-ու-ի-ու-ն-ե-ն:

Առշման տեսակներն որոշելու և դատելու մէջ մարդ շատ սխալների և
հանդիպում։ Սովորաբար արհեստը աւելի երկրորդական տեղ է բռնում,
մասդեռ զա՞եթե լաւ սովորեցնեն և դորս մէջ քաջ վարժեցնեն, ուկեայ
երկիր պիտի տայ, իսկ ընդհակառակն զանազան պաշտօնական ասպարէզնե-
րին շատ յաճախ առաջնակարգ տեղի են տալի և աւելի զնահատում և չեն
նկատում որ շատ անդամ արտաքին փայլը շատ թշուառութեանց առիթ է
յինում։

Հատ սիսլ է նոյնպէս որ ծնողներն իւրեանց շատ քիչ ընդունակ զաւակ-
ներին ստիպուեն բարձր ասպարեզ ընտրել. միւս կողմից էլ ցաւալի է. որ
ստորին գասակարդը իւր տաղանգաւոր զաւակների ընդունակութիւնների
մասին շատ սակաւ հասկացողութիւն ունի և նրանց 14 տարեկան հասա-
կում՝ ուսումնարանից հեռացնում են. Աեանքի կոչման ընտրութեան միջոցին
պէտք է մանուկի հակման հետ նաև նորա ընդունակութիւնն աչքի առջե-
ռւնենալ, իսկ այդ բանի նկատմամբ ո՞ւմ հետ առաել կարելի էր խորհր-
դակցել, եթէ ոչ ուսուցչի հետ.

Սույն ընդունիչ և ուսումնարանի մէջ ի՞նչպէս պէտք է այդովէս հայոցութիւն յառաջ բայ։ Այդ բանի համար որպէս առիթ կարող է լինել տան մէջ ուսումնարանական աշխատանիբը։ դա միևնույն ժամանակ մի բազուկ է կողմում։ որով ուսումնարանը շարունակ ընտանիքի հետ հաղորդակցութեան մէջ է մտնում։ և միւս կողմից ևս դա ընտանիքին յարմար առիթ է տալիս ուսումնարանի ուսուցման ընթացքի վերայ մի հայեացք ձգելու։ ուստի այդպիսով հնարաւոր է դառնում ընտանիքի և ուսումնարանի փոխադարձ յարաբերութիւնը։

Ընտանիքը այդ աշխատանիքի պատրաստելու վերայ պիտի վերահսկէ և ուշք դարձնէ։ որ ուսումնարանի տուած կանոնների համաշայն կատարուի։

Ուսումնարանը պարտաւոր է ընտանիքին ծանօթութիւն տալ այդ պահանջների մասին և նրանց նրա օգտաւետութեան, պատղաբերութեան և անհրաժեշտութեան մէջ համոզել։

Պարձեալ ընտանիքը պիտի նկատի, թէ մանուկները այդ աշխատանիքներն հաճութեամբ թէ տհաճութեամբ են կատարում, արդեօք պյտ շատ ծանը և թէ շատ թիթէ, դիտակցաբար են կատարում թէ մաքենայաբար։ Այս պյուլոր դիտողութիւններն ընտանիքը ուսուցչին պիտի հաղորդէ։ իսկ դա այդ բաներն ոչ թէ միայն հաճութեամբ պիտի լսէ, այլ և պիտի գնահատէ։ և եթէ դա դիտած չարիքներն բացառապէս ուսումնարանի միջոցաւ հեռացնել չէ կարողանում։ հարկաւոր է որ այդ բանը հեռացնելու միջոցների մասին ծնողների հետ խորհրդակցի։

Որպէս զի ընտանիքի և ուսումնարանի մէջ մի հասկացողութիւն կայաց, հարկաւոր է որ ուսուցիչը գրաւոր տեղեկութիւններ տայ ծնողներին։ Դրանց մէջ առաջին տեղը բռնումէն վեցամսնեայ կամ տարեկան վկայականները։ որոնք ոչ թէ միայն աշակերտների յառաջադիմութեան մասին դիտութիւնների մէջ, այլ և նրանց վարքի, ջանասիրութեան և ուսումնարանը շարունակ այցելելու կամ չայցելելու մասին որոշ գաղափար են տալիս։ Մի այդպիսի վկայական, ոչ թէ վերիվերոյ մի վճիռ և պալ երկար քննադատութեան և կշռադատութեան մի հետեւնք, որին ուսումնարանական կեանքի երկար ժամանակեայ դիտողութիւնները և փորձառութիւնները իրրենիմունք ծառայումն։ Դա ունի մի պաշտօնական և շատ նշանաւոր բնաւորութիւն ուստի ոչ թէ միայն ծնողներին մի գաղափար պիտի տայ իրանց զաւակների հոգեկան դրութեան մասին, այլ և միւնոյն ժամանակ դա մանուկներին մի առաջնորդ և ուղղիչ է լինում։ որով նորա իրանց մասին ինքեանք ևս ճիշտ վճիռ են իմանում։ Ծնողների պարտաւորութիւն է նաև, որ ոչ թէ միայն իրանց զաւակների վկայականների մասին տեղեկանան, այլ և գորանկատմամբ պիտի աշխատեն մանուկների վերայ ներգործել և գորա համար գործադրուելիք միջոցների մասին ուսուցչի հետ խորհրդակցել։

Բայց այդ ուսումնարանական վկայականից, ուսումնարանը պարտաւոր է նաև ծնողներին մանուկների արած նշանաւոր անկանոնութիւններն ուսման և վարքի վերաբերմամբ գրաւոր հաղորդել, սոյնպէս և ծնողներն իրանց զա-

աւկների վարքի մասին ուսումնարանից դուրս պարտաւոր են ուսուցիչներին տեղեկութիւն տալ, որպէս զի երկուսն ևս իմիասին ձեռք ձեռքի տուած աշխատեն ամեն տեսակ անյարմարութիւններ հեռացնել.

Ծնողներն ու ուսուցիչներն պէտք է շատ անգամ անձամբ միմեանց հետ տեսնուին, որին առիթ կարող է լինել, ուսումնարանի տօնած տօներն որոնք մանկավարժական մեծ նշանակութիւն ունին. Սովորական աշխատանքի տեղերը մի հանդիսաւոր և զարդարուած տարածութեան վերածելով, ինքնըստինըեան մանուկների վերայ մի ուրախ տպաւորութիւն է թողնում. մանաւանդ երբ նոքա տօնի հանդերձներով են եռևում և ուսուցիչը հանդիսա: որ ձայնով սկսումէ նրանց տօնի նշանակութիւնը բացատրել, իսկ նոքա երգարաններ ձեռին այդ տօնին յարմար երգեր են երգում, այն ժամանակ նրանց սիրտը ուրախութեամբ լցւումէ և հոգին ստանումէ մի անջնջելի տպաւորութիւն. և ահա դորանով աճում է նրանց սէրը ոչ թէ միայն առ ուսումնարանն այլ և առ ուսուցիչն. Միւնցին տրամադրութեան են ենթարկվում նաև ծնողներն եթէ որ այդպիսի տօներին մասնակցել կարողանում են:

Գրեթէ միւնոյն բնաւորութիւն ունի նոյնպէս բոլոր դասարանների աշակերտների միասին զրօսնուլն. այդ միջոցին իւրաքանչիւր ուսուցիչ ճաշից յետոյ գեղեցիկ եղանակին առնումէ մի խումբ աշակերտներ և ծնողների մասնակցութեամբ բաց երկնքի տակ զրօսնումէ. Այդ տեսակ զրօսանիքներն ոչ թէ միայն յարմար դէպքեր են տալիս հայր՝ նսգիտութեան և բնագիտութեան ուսուցումն հարստացնելու, այլ և զարթեցնումնն մանուկների մէջ միտք և հասկացողութիւն բնութեան տեղեկութիւնների և երեղյթների համար, նա և ցանկութիւն և ուրախութիւն միասնական խաղի համար բաց երկնքի տակ ևս առաւել բարձրացնուման. Այդպիսի դասարանական զրօսանիքներ պէտք է տարուայ տաք եղանակին կատարուին և այն ևս առնուազն ամիսը մի անգամ:

Եթէ ուսուցիչը հասկանումէ յարմար խաղեր սարքել և առաջնորդել ծնողներին ևս միւնոյն դերը տալով ինչ որ ինքն անումէ, և կամ թէ այնպէս անէ որ ծնողներին հաճոյք պատճառէ իւր սարքած խաղերով, այն ժամանակ նա ոչ թէ միայն սէր և վստահութիւն իւր աշակերտներից և ծնողներից կը վայելէ. այլ և ընտանիքի և ուսումնարանի մէջ մի կապ կը հաստատի, որ նոքա դաստիարակչական գործունեութիւնը կը թեթեացնի և միւնցին ժամանակ կարագացնի:

Սակայն ծնողներն և ուսուցիչներն դաստիարակութեան գործի մէջ մի ընդհանուր հասկացողութիւն ի գլուխ բերելու համար պէտք է փոխադարձարար միւնոց վիճուկն. կարծիք չկայ որ այդ դէպքում ամենամեծ պարտաւորութիւնը ընկնումէ ծնողներին, որովհետեւ մանուկները նրանց են պահանում, և նրանց բարեկեցութեան մասին անմիջական հոգս տանողներ նրանք են. թէ նոքա պատժական դէպքերում և այլ հանգամանիքներում իսկոյն նշանակեալ կառավարութեան են զիմում, այդ շատ սխալ է. Նոքա նախիրանց զաւակներին ուսուցանող ուսուցիչն պիտի դիմեն, նրա հետ իրանց զաւակներին ուսուցանող ուսուցիչն պիտի դիմեն, նրա հետ

սակցեն մութ կէտերը պարզեն, և եթէ այդ անհնարին կամ անպտուղ մնայ, այն ժամանակ կարող են նոքա ուրիշ քայլ անել.

Սակայն ուսուցիչն եւս պիտի շատ անգամ այն ընտանիքները որոնի, որից մանուկներ եւ ստացել դաստիարակութեան համար, դորանով նա հանգամանքից օգուտ է քաղում միւնոյն ժամանակ մի ակնարկ ընտանեկան կեանքի վերայ ձգելու, որը նորան մանուկներին դատելու և քննելու համար շատ կարեոր է. Գիւղերում և փոքր քաղաքներում՝ այդ տեսակ այցելութիւններ շատ հեշտութեամբ կրկատարուին, իհարկէ մեծ քաղաքներումնեն այդ բաւական մեծ դժուարութիւն է ներկայացնում. Սակայն, եթէ մի քանի ուսուցիչներ իմանային, թէ ինչպէս ծնողների հետ բարեկամաբար խօսելով իրանց կոչումը թեթևացնում և գործունեութիւնն բարձրացնում են, այն ժամանակ նոքա ոչ փոքր աշխատանքից կրվախենային և ոչ էլ իրանց պաշտօնական գիրքի մասին սխալ կարծիք ունենալուց կը դանդաղէին՝ ինքեանք այդ բանի համար առիթ տալով.

Ընտանիքի և ուսումնարանի մէջ մի ներքին կապ կարող է հաստատուել, եթէ ուսուցիչը մի ժողովրդական դրագարան հիմնած ունի և դրանով համայնքի զարգացման նպաստում և առաջնորդում է, եթէ նա իւր աշակերտների ծնողների հետ միասին մի այնպիսի օրագիր է կարդում, որն դաստիարակութեան վերաբերեալ հարցեր է պարզաբանում, եթէ նա երբեմն իւր շորս կողմը ծնողներին հաւաքում և նրանց դաստիարակութեան մասին դասախոսութիւններ է կարդում, կարդացածը մեկնումէ, սովորական հարցեր առաջարկում և այդպիսով վիճարանութեան առիթ է լինում, որին բոլոր անդամները մասամբ հարցնելով և մասամբ ևս պատասխանելով մասնակից են լինում. Ուսումնարանի համայնքի անդամների մի այդպիսի փոխադարձ մոքերի փոխանակութիւն միահեանց մէջ և ուսուցչի հետ կարող է շատ բարերար հետեանքներ ունենալ.

Լաւ կանէ ուսուցիչը, եթէ նա իւր ուսումնարանի համայնքի մէջ պատահած ընտանեկան դէպքերին մասնակից լինի, լինի դա թէ ուրախութիւն և թէ տրտութիւն. Այդպիսով նա ընտանիքին առաւել մօտենումէ և նրա վստահութիւնն ու սէրը ձեռք է բերում, իսկ թէ նա այդ ունի, այն ժամանակ նա իւր ապագայ գործունեութեան համար մի ամուր պատուար է ունենում:

Այսպէս, կեանքը ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ զննողների և մատաղ սերնդի բարեացակամների համար բաղմաթիւ դէպքեր կան ուսումնարանի և ընտանիքի մէջ հասկացողութիւն և համաձայնութիւն ի գլուխ բերելու համար, ուստի ոչ մի դաստիարակ չըպիտի դանդաղի իրան հանդիպաղ յարմար դէպքերից օգուտ քաղելու, նա դրանից շատ բարեփներ պիտի չնձէ.

Այսն դէպքում ուսումնարանի և ընտանիքի դաստիարակութեան երկու գլխաւոր գործիչների մէջ յարաբերութիւնն ամեն ուրեք առաւել սերտ կապ պիտի լինի. քան թէ դա իրապէս կայ. և այդ՝ մեր մօտաղ սերնդին

փրկութիւն կը բերէ՞ս և դրանով ևս միւնոյն ժամանակ ժողովրդին բարեբաղդութիւն և երջանեկութիւն, զի մատաղ սերնդի դաստիարակութիւնից կախումն ունի մի ազդի և հայրենիքի ապագան:

(Թարգմ.) Սարդիս Տ. Գարբիէլեանց.

• . . Հայոց Խճառչէր.

Խոստացեր Եմ. Խոստումն կը կատարեմ. Առիթ ունենալով շրջել Օսմանեան Հայաստանի մէջ՝ նկատմունքներս զրի կանցունեմ և իրրե փորձ՝ կուղարկեմ առաջին նամակս, վերաբերեալ Պայտազիտու. Կը շարունակեմ այսուհետեւ, յոյս ունենալով թէ տպագրելու շնորհը չէք վանար.

Ա. Դ.

Նահանջ Ա.

1887 Օգոստ. 1. Տրապիզոն.

Պ Ա Յ Ա Զ Ի Տ *

Երջանկայիշտառկ նախնեաց միջնաշխարհի կամ Այրարատ նահանգի քսան գաւառներէն միոյն՝ Կոգովտի կամ Կոգի այժմեան գլխաւոր քաղաքն է Պայտազիտ, որ կը դանուի մերձ ի Մասիս Թանտրիկ լերան շղթայից Գրզգրւտաղ և Շարան քարեր անուանեալ մասերու սիրտը իրր 400 տուն բնակչօք, որոց 180ը հայ են, մնացեալք՝ թուրք. Հայք ունին կանգուն մի եկեղեցի Ս. Կարապետ անուամբ կոփածոյ քարով՝ փայտածածք խախուտ և տգեղ տիպարով մը. որոյ երկու դրան չորս արձանագրութիւններն են:

Ա. Ժուին Ռ.ՄԿ. Կամօքն Աստրւեոյ և սրբոյ Աստուածածնի վերստին նորոգեցաւ Սուրբ Կարապետ եկեղեցիս ի Հայրապետութեան Տեառն Եփրեմի սրբազն կաթուղիկոսին ամենայն Հայոց և մերոյս առաջնորդ Սիմեօն Արքեպիսկոպոսի. .

Բ. • Որ և ողորմութեամբն ամենազօրին,

Եւ օժանդակութեամբ սուրբ Աստուածածնին,

Շինեցաւ եկեղեցիս մեր վերստին,

Անուամբ սրբօյ Կարապետին,

Ի պարծանս Հայոց ազգին,

(*) Պայտազիտ քողոքի հնագույն անունն է Պարօնք. արտաքացեալ ինչ կը կոչէին յոյստի չէ. այժմեան Պայտազիտ կոչումն Օսմանցւոց Սուլթան Պայտազիտէ անունէն առնուած է: